զավ բավականին արդյունավետ։ Նրա համար բնորոշ էր այն, որ բոլոր զեկուցումները լսվեցին մեծ հետաքրքրությամբ, և բոլորի շուրջը, առանց բացառության, ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որը հաճախ շարունակվում էր նաև ընդմիջումների ժամանակ։ Գիտաժողովը կարևոր էր առանձնապես երկու առումով. նախ՝ այն ներդրում էր ոչ միայն հայերենագիտության և պատմահամեմատական լեզվաբանության, այլ նաև լեզվի ընդհանուր տեսության բնագավառում։ Երկրորդ՝ այն հնարավորություն ընձեռեց հաստատելու նոր կապեր, ճշգրտելու այն պրոբլեմատիկան, որի վրա աշխատում են սովետական և արտասահմանյան հայագետները, ավելի հանգամանորեն ծանոթանալու հայերենի ուսումնասիրության տարբեր բնագավառներում Հայաստանից դուրս, առանձնապես ԱՄՆ-ի տարբեր համալսարաններում տարվող աշխատանքներին և ընդհանուր գծով տալու հետագա աշխատանքի հեռանկարները։ Այն անպայմանորեն խթան կհանդիսանա հայերենագիտական աշխատանքների հետագա ծավալմանը, առանձնապես արտասահմանում։

Գիտաժողովի արդյունքները ունեին նաև գործնական նշանակություն։ Այս առումով պետք է ընդգծել առանձնապես ԷՀՄ-ի օգնությամբ լեզու ուսումնասիրելու փորձը։ Այդպիսի փորձի կիրառումը մեզանում կարող է օժանդակել ռուսաց և օտար լեզուների ուսուցման բարելավմանը։

Հայերենագիտական միջազգային գիտաժողովը վկայում է նաև այն աճող հետաքրքրության մասին, որ կա արտասահմանում դեպի հայերենը։ Ըստ «Armenian Reporter» (2. 8. 1979 թ.) թերթի՝ ներկայումս հայերեն ուսումնասիրում են շատ ավելի երկրներում, քան երբևէ նախկինում։

Գիտաժողովի աշխատանքները գրականորեն լուսաբանվեցին արտասահմանյան համապատասխան պարբերական մամուլում (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա և այլն)։ Ցանկություն հայտնվեց միջազգային հայերենագիտական 2-րդ գիտաժողովն անցկացնել Երևանում։

Բանասիր. գիտ. դոկտոր
Է. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ (Մոսկվա)
Բանասիր. գիտ. դոկտոր Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԸ

Մեր երկրում արխիվային գործի իսկական ծավալումն ու զարգացումը տեղի ունեցավ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո։ 1918 թ. հունիսի 1-ին Ժողովրդական կոմիսարների խորհուրդը Վ. Ի. Լենինի ստորագրությամբ դեկրետ հրապարակեց արխիվային գործի վերակառուցման ու կենտրոնացման մասին։

Դեկրետով ցարական ու ժամանակավոր կառավարությունների կենտրոնական հիմնարկների և գերատեսչությունների արխիվներն անցնում էին պետությանը, իսկ նրանցում պահվող փաստաթղթային նյութերը հայտարարվում պետական միասնական արխիվային ֆոնդ։

Հետագայում, Լենինի ստորագրությամբ լույս են տեսնում նաև մի քանի այլ դեկրետներ արխիվների մասին, որոնցում ավելի հանգամանորեն նշվում են երկրում արխիվային գործի կազմակերպման տարբեր բնագավառներում ձեռնարկվող միջոցառումները, հատկապես հեղափոխական շարժումների պատմության վերաբերյալ փաստաթղթերի կենտրոնացման անհրաժեշտությունը։ Ա. Լունաչարսկին, Սովետական Միության ականավոր պատմաբաններ Դրեկովը, Պոկրովսկին, Ադորատսկին, Յարոսլավսկին, Խվոստովը, Ադամովը և ուրիշներ մեծ ծառայություններ ունեն արխիվային գործի կազմակերպման, «Կրասնի արխիվ» ժուռնալի ստեղծման, առաջին վավերագրական ժողովածուների և ցարական կառավարության գաղտնի պայմանագրերի, դիվանագիտական գրագրությունների հրապարակման գործում։

1938—1962 թթ. երկրի պետական արխիվները գտնվում էին ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի (ապա մինիստրության) տնօրինության տակ, հանգամանք, որ չէր նպաստում արխիվային փաստաթղթերի լայն մասշտաբով օգտագործմանը՝ ի շահ գիտության զարգացման։

Հետագայում մի շարք վերակառուցումներից ու կազմակերպչական փոփոխություններից հետո ՍՍՀՄ մասշտաբով արխիվային գործի անմիջական ղեկավարությունն անցնում է Մինիստրների խորհրդին ինչպես կենտրոնում, այնպես էլ ազգային հանրապետություններում։

ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր գործում է Գլխավոր արխիվային վարչությունը՝ պետական կոմիտեի իրավունքներով։ Այդ գլխավոր վարչությունն ունի կոլեգիա, գիտական խորհուրդ, գիտահետազոտական ինստիտուտ և մոտ երկու տասնյակ բաժիններ։

Մոսկվայի և Լենինգրադի պետական կենտրոնական արխիվները (մոտ 12) անմիջապես ենթարկվում են Գլխավոր վարչությանը։

Արտաքին գործերի մինիստրությունն ունի իր գլխավոր արխիվային (պատմադիվանագիտական) վարչություն, որը զբաղվում է իր սիստեմի արխիվներով։ Պաշտպանության մինիստրության տրամադրության տակ ևս կան մի քանի արխիվներ, իսկ ռազմածովային նավատորմի պետական կենտրոնական արխիվը (Լենինգրադ), ռազմապատմական և կարմիր բանակի պետական կենտրոնական արխիվները (Մոսկվա) գտնվում են ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր Գլխավոր արխիվային վարչության տնօրինության տակ։

Պատմաբան արխիվիստների կադրեր պատրաստելու համար ՍՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության սիստեմում գործում է Մոսկվայի պատմաարխիվային ինստիտուտը։ Մոսկվայում, Լենինգրադում, Պոդոլսկում, Գատչինայում սովետական կառավարությունը մի շարք նախկին պալատական շենքեր է տրամադրել պետական կենտրոնական արխիվներին և կառուցել նոր, ժամանակակից շենքերի հիանալի համալիրներ։

1920 թ. դեկտեմբերի 17-ին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն դեկրետ հրապարակեց, որով Հայաստանի աղգագրական թանգարանները, գրադարանները և էջմիածնի մատենադարանն իրենց շարժական գույքով հանձնվեցին հանրապետության լուսավորության ժողովրդական կոմիսարիատի տնօրինությանը։

Այն ժամանակ դեռևս պատկերացում չկար կույտ-լուսավորական, թանգարանային, գրադարանային գործի կառուցվածքի մասին, ամեն ինչ պետք է սկսվեր նոր հիմունքներով, պետք է գտնվեին առավել հարմար ձևեր ու մեթոդներ, ստեղծվեին նոր հիմնարկություններ։

1921 թ. փետրվարի 5-ին ռազմահեղափոխական կոմիտեն իր դեկրետով էջմիածնում հիմնում է կուլտուր-պատմական գիտական ինստիտուտ, որը պետք է ղեկավարեր մատենադարանը, թանգարանները և գրադարանները։

Դա, իհարկե, դեռ հարցի լուծում չէր։ Հարկավոր էր հոգ տանել, որպեսզի Թիֆլիսից, Մոսկվայից, հայկական զանազան օջախներից ստացվեին այն բոլոր արխիվներն ու նյութերը, ինչ պահպանվել էր։

1921 թ. հունիսի 8-ին ՀՍՍՀ ԺողկոմսովետԸ որոշում է ընդունում Երևանում հիմնել հեղափոխության թանգարան, որտեղ պետք է կենտրոնացվեին ոչ միայն հեղափոխական շարժումների պատմությունն արտացոլող վավերագրերը, այլև առհասարակ հայ ժողովրդի պատմության հետ առնչվող նյութերը։ Թանգարանում ստեղծվեց նաև արխիվային բաժին՝ Խ. Սարգսյանի ղեկավարությամբ։

1923 թ. սեպտեմբերի 26-ին ՀՍՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահությունը որոշում է ընդունում պետական կենտրոնական արխիվ ստեղծելու մասին։ Աշոտ Հովհաննիսյանին, Ասքանազ Մռավյանին և Արտաշես Կարինյանին հանձնարարվում է մշակել պետական կենտրոնական արխիվի կանոնադրությունը, որը հաստատվում է 1924 թ. փետրվարի 21-ին։ Մարտի 17-ին Կենտգործկոմը պետական արխիվի վարիչ նշանակեց պրոֆ. Խ. Սամվելյանին։ Վերջինս մի քանի տարվա ընթացքում բավական արդյունավետ գործունեություն ծավալեց, սակայն չափազանց սուղ նյութատեխնիկական պայմանները հնարավորություն չէին տալիս ավելին անելու։ Արխիվը չուներ իր առանձին շենքը, սահմանափակ էր հաստիքային աշխատողների թիվը։

1929 թ. ապրիլի 10-ին ՍՍՀՄ Կենտգործկոմին առընթեր ստեղծվում է կենտրոնական արխիվային վարչություն՝ ամբողջ երկրում արխիվային ծառայությունը ղեկավարելու համար։ ՀՍՍՀ Կենտգործկոմը ևս 1931 թ. հոկտեմբերի 4-ին որոշում է ընդունում հանրապետությունում կենտրոնական արխիվային վարչություն ստեղծելու և արխիվային գործի բարելավման մասին։ 1932 թ. ապրիլի 23-ին հաստատվում է արխիվային վարչության կանոնադրությունը։

1937—1938 թթ., նոր սահմանադրության ընդունման կապակցությամբ, արխիվային ծառայության կառուցվածքում տեղի են ունենում փոփոխություններ։ Արխիվային հաստատությունները հանձնվում են ներքին գործերի ժողկոմատների (հետագայում մինիստրությունների) տնօրինությանը, որ տևում է մինչև 1962 թ.։ Թեև այդ տարիներին երկրում բավական գործ կատարվեց արխիվների ուղղությամբ, բայց ընդհանուր դրվածքն անբավարար էր, հատկապես արխիվային փաստաթղթերից օգտվելու հնարավորությունը խիստ սահմանափակ էր։

1962 թ. հուլիսի 22-ին ՍՍՀՄ կառավարությունը, քննարկելով երկրում արխիվային ծառայության վիճակը, ի թիվս այլ կարևոր միջոցառումների, որոշեց այդ ծառայությունը հանել ներքին գործերի մինիստրության տնօրինությունից և կենտրոնում ու հանրապետություններում Մինիստրների խորհուրդներին առընթեր ստեղծել արխիվային վարչություններ, իսկ Մոսկվայում՝ Գլխավոր արխիվային վարչություն։ Հետագայում մի շարք հանրապետություններում, այդ թվում նաև մեր հանրապետությունում, նույնպես ստեղծվեց գլխավոր

վարչություն։ Նշված որոշումը շրջադարձային կետ հանդիսացավ արխիվային ծառայության արմատական բարելավման գործում։

Այժմ հանրապետության գլխավոր արխիվային վարչությունում, պետական կենտրոնական արխիվներում ամեն ինչ արվում է, որպեսզի որքան հնարավոր է ամբողջական լինեն մեր ժողովրդի նոր, նորագույն և սովետական ժամանակաշրջանի պատմությունն արտացոլող արխիվային փաստաթղթերի ֆոնդերը։ Վերջիններս համալրվում են հանրապետությունում գործող պետական, կառավարական, տնտեսական, գերատեսչական, քաղաքային, շրջանային, գիտական, կուլտուրական, ուսումնական և այլ կարգի հիմնարկներից ստացվող, ինչպես նաև երկրի այլ քաղաքների արխիվներում գտնվող մեր ժողովրդի պատմության վերաբերյալ նյութերով, սփյուռքի գաղթօջախներից փոխադրվող վավերագրերով։

Հոգ է տարվում, որպեսզի արխիվներում կենտրոնացած փաստաթղթերի, լուսանկարների, կինոժապավենների, ձայնագրության ժապավենների, թերթերի, ամսագրերի, հազվագյուտ գրքերի, միկրոֆիլմերի և այլ արժեքների պահպանումը գրվի բարձր հիմքերի վրա։ Այստեղ առաջին անհրաժեշտություն է դառնում ժամանակակից մասնագիտացված շենքերի կառուցումը, կահավորումը, լաբորատորիաների, արհեստանոցների, մասնագիտական, վերականգնման արտադրամասերի ստեղծումը։ Արխիվային ցանցի աշխատողների ամենօրյա գործունեությունն իր մեջ ներառնում է կենտրոնացված նյութերի մշակումը, հաշվառումը, ըստ տնտեսության ու գիտության տարբեր բնագավառների ֆոնդավորումը, խմբավորումը, ցուցակների և բարտերի կազմումը, ուղեցույցների հրատարակումը, մի խոսքով՝ գիտատեղեկատու ապարատի ստեղծումը, առանց որի հնարավոր չէ արխիվային ֆոնդերը դնել գիտական շրջանառության մեջ։

Ժողովրդական տնտեսության, գիտության և կուլտուրայի զարգացման համար արխիվային նյութերի օգտագործումը, ուսումնասիրողներին բնթերցասրահներով և այլ պայմաններով ապահովելը, փաստաթղթերի ժողովածուների հրատարակումը, աշխատավորության սպասարկումը, նրանց անհրաժեշտ տեղեկանքներ (աշխատանքային ստաժի, ծառայությունների մասին և այլն) տալը, գիտահետազոտական և գիտահրատարակչական աշխատանքների կազմակերպումը և այլն, կազմում են արխիվային ծառայության գլխավոր խնդիրը։

Նկատենք, որ հին և միջին դարերի մեր մշակույթի ոսկե արժեքները՝ ձեռագրերը պահվում են առանձին՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանում, որը նույնպես անմիջականորեն ենթարկվում է Մինիստրների խորհրդին։

Հայաստանի կոմկուսի պատմությունն արտացոլող կուսակցական փաստաթղթերը հիմնականում կենտրոնացված են կուսակցական արխիվում, որը գտնվում է ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի դիրեկցիայի տնօրինության տակ։

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր գլխավոր արխիվային վարչության անմիջական տնօրինության տակ գործում են պետական կենտրոնական արխիվները։

Առ 1-ը հունվարի 1980 թ. գլխավոր արխիվային վարչության անմիջական տնօրինության տակ գործում են հետևյալ արխիվային հաստատությունները։

1. ՀՍՍՀ պատմության պետական կենտրոնական արխիվում պահվում են 1600—1920 թթ. ընդգրկող ժամանակաշրջանի վավերագրերը։ Հիմնական նյութերն արտացոլում են հայ ազգային-ազատագրական շարժումները, Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելու բաղաքական իրադարձությունները, Կովկասի փոխարքայության, Հայկական մարզի, Երևանի նահանգի, Կարսի մարզի վարչական օրգանների գործունեությունը, հայ մշակույթը XIX դարում և XX դարի սկզբին, հեղափոխական բանվորական շարժումները, Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և այլն։

2. ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվում կենտրոնացված են սովետական ժամանակաշրջան՝ 1920 թ. նոյեմբերից մինչև օրս Հայաստանի պետական, վարչական, տնտեսական, կուլտուրական, գիտական, ուսումնական և այլ կարգի բոլոր օրգանների, հիմնարկությունների, գերատեսչությունների, շրջանային ու քաղաքային խորհուրդների գործունեության վերաբերյալ պատմագիտական նշանակություն ունեցող վավերագրերը։ Այս արխիվը ամենահարուստն է ու կարևորը մեր դարաշրջանի պատմությունն ուսումնասիրելու համար։ Միջին հաշվով այստեղ հանրապետության 3000 հիմնարկ-ձեռնարկություններից մշտական պահպանության համար տարեկան ընտացվում է 50000 գործ։

3. ՀՍՍՀ կինո-ֆոտո-ֆոնո փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվը կոչված է պահպանելու և օգտագործելու Սովետական Հայաստանում ստեղծված բոլոր կինոֆիլմերը, կա-

բեռոր պատմական իրադարձությունների և հայ ականավոր գործիչների հետ առնչվող ձայնագրությունները (ժապավեններ, ձայնապնակներ), մեր ժողովրդի նորագույն պատմության այս կամ այն դրվագը պատկերող լուսանկարները։

4. ՀՍՍՀ հայ պարբերական մամուլի պետական կենտրոնական արխիվը ստեղծվել է 1974 թ.։ Այստեղ արդեն կենտրոնացված են տասնյակ հազարների հասնող թերթերի, ամսագրերի, հանդեսների, հազվագյուտ գրքերի օրինակներ, համալիրներ։

5. ՀՍՍՀ գիտատեխնիկական փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվը ստեղծվել է վերջերս և կոչված է կենտրոնացնելու, մշակելու և գիտական շրջանառության մեջ դնելու հանրապետությունում գործող ավելի քան 100 նախագծային, գիտահետազոտական ինստիտուտների, կոնստրուկտորական բյուրոների և այդ բնույթի այլ կազմակերպությունների գործունեության պատմությունը կերտող վավերագրերը։

Պետք է ավելացնել, որ Լենինականում, Կիրովականում, Զափանում և Էջմիածնում գործում են ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվի մասնաճյուղերը։

Գլխավոր արխիվային վարչությունն ունի իր կոլեգիան և գիտական խորհուրդը։ Վերջինիս կազմում ընդգրկված են գիտնականներ, պատմաբաններ և արխիվների հետ առնչվող կազմակերպությունների ներկայացուցիչներ, արխիվային հաստատությունների բարձրորակ մասնագետներ։

Գլխավոր արխիվային վարչությանը և պետական կենտրոնական արխիվներին կից գործում են համապատասխան փորձագիտական և մեթոդական հանձնաժողովներ։ Պետական կենտրոնական արխիվներում ստեղծված են նյութերի վերականգնման, միկրոպատճենահանման, լուսանկարչական, կինոյի, ձայնագրության և այլ լաբորատորիաներ։

Գլխավոր արխիվային վարչությունն ունի իր տպագիր օրգանը՝ «Բաներ Հայաստանի արխիվների» հանդեսը, որը լույս է տեսնում տարեկան երեք անգամ։ Նրա էջերում հրապարակվում են նորահայտ արխիվային փաստաթղթեր։

Այսօրվա դրությամբ հանրապետության շրջաններում և քաղաքներում գործում են 35 պետական արխիվներ, որոնք անմիջապես ենթարկվում են ժողովրդական դեպուտատների խորհուրդների համապատասխան գործկոմներին, իսկ մինիստրություններում, պետական կոմիտեներում, գլխավոր վարչություններում, արտադրական միավորումներում և այլ կազմակերպություններում կան շուրջ 120 արխիվներ։ Հանրապետության ղեկավարությունը, տնտեսական, ֆինանսական, շինարարական կազմակերպությունները հսկայական ուշադրություն են դարձնում մեր ժողովրդի մշակույթի, նրա պատմության աղբյուրագիտական բազաների՝ պետական արխիվների աշխատանքներին։ Ներկայումս ոչ միայն պետական կենտրոնական, այլև քաղաքային ու շրջանային արխիվները (չնչին բացառությամբ) ունեն իրենց առանձին հարմարավետ շենքերը, սենյակները։ Միայն պետական կենտրոնական արխիվների համար կառուցվել է չորս շենք, որոնցից երկուսը ութհարկանի։ Կահավորվել են մեկ տասնյակից ավելի լաբորատորիաներ ու արհեստանոցներ։ Կենտրոնական արխիվները ապահովված են բարձրորակ մասնագետներով։ Վերջիններիս, ինչպես նաև ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի և մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի աշխատողների ջանքերով լույս են ընծայվել մի քանի տասնյակ փաստաթղթերի ժողովածուներ։

Վերջին մեկուկես տասնամյակում մեծապես հարստացել է պետական արխիվային ֆոնդը։ Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Թբիլիսիից, Բաքվից, Քիշնևից, Ռոստովից, Աստրախանից, Կազանից, Կրասնոդարից, Արմավիրից և այլ քաղաքներից մեծ քանակությամբ փաստաթղթեր կամ միկրոպատճեններ են կենտրոնացվել հանրապետության արխիվներում։ Պետական կենտրոնական արխիվները հարստացել են նաև սփյուռքի բազմաթիվ գաղթօջախներից փոխադրված նյութերի հաշվին։

Գլխավոր արխիվային վարչության աշխատողներից մեծ ջանքեր պահանջեց ՀՍՍՀ կառավարության շուրջ 60-ամյա գործունեության հետևանքով առաջացած փաստաթղթերը գիտատեխնիկական մշակման ենթարկելու, դրանք Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ փոխադրելու գործը։ Հանրապետության սոցիալ-տնտեսական, նյութական ու հոգևոր կյանքը պատկերող հարյուր հազարավոր փաստաթղթերի կենտրոնացումն ու գիտական շրջանառության մեջ դնելը անշուշտ բարդ ու դժվարին, սակայն նաև շնորհակալ գործ էր։ Շուրջ 10—12 տարվա լարված ու քրտնաջան աշխատանքից հետո այսօր արդեն ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի, Մինիստրների խորհրդի արխիվային բոլոր ֆոնդերը կարգավորված, ցուցակագրված ու գիտական շրջանառության մեջ են դրված։ Տասնյակ հազարավոր միավորների հասնող այդ ֆոնդը հայ

ժողովրդի նորագույն շրջանի պատմության համար ամենաարժեքավոր աղբյուրագիտական բազան է։ Նույն կարգով գիտատեխնիկական մշակման են ենթարկվել Գերագույն սովետի նախագահության ապարատի, պետպլանի վիճակագրական վարչության, համարյա բոլոր մինիստրությունների ու գերատեսչությունների արխիվները։ Այդ միջոցառումների հետևանքով պետական կենտրոնական արխիվները հարստացել են մի քանի հարյուր հազար գործերով, որոնք պատկերացում են տալիս Սովետական Հայաստանի առաջընթացի մասին բոլոր ընագավառներում։

Շնորհիվ կինո-ֆոտո-ֆոնո արխիվի կոլեկտիվի անձնուրաց աշխատանքի, ըստ էության վերջնական կորստից փրկվեցին հայ կինոյի շուրջ 50-ամյա գործունեության արդյունքներ։ Տարիների ընթացքում կինեմատոգրաֆիստների ստեղծած գեղարվեստական և վավերագրական ժապավենները ներկայումս արխիվի մասնագետների ջանքերով ստուգվում, վերականգնվում և տեղադրվում են ապահով ու հարմարավետ արխիվադարաններում։ Այս ընագավառում, սակայն, դեռ շատ անելիքներ կան։

Այժմ միջոցներ են ձեռնարկված խնամքով պահպանելու մեր ժողովրդի կյանքում տեղի ունեցող պատմական, քաղաքական, մշակութային խոշոր իրադարձություններին նվիրված հանդիսավոր արարողությունների ձայնագրություններն ու կինո-ֆոտո նյութերը։ Ապագա սերունդները շնորհակալությամբ կուսումնասիրեն մեր արխիվներում պահվող՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյա և 60-ամյա հոբելյաններին, Լենինի ծննդյան 100-ամյակին, Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի 30-ամյակին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակին, Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորելու 150-ամյակին նվիրված հանդիսությունները, ինչպես նաև Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին, հայ գրերի գյուտի 1600-ամյակին, Հովհ. Թումանյանի, Կոմիտասի, Դեմիրճյանի 100-ամյա հոբելյաններին, Միքայել Նալբանդյանի 150-ամյակին նվիրված արարողությունները, միջոցառումները պատկերող հարուստ նյութերը։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր գլխավոր արխիվային վարչությունը ժամանակին ջանքեր է գործադրել, որպեսզի որոշ վայրերից արխիվային նյութերի իսկականները հանձնվեն մեր հանրապետությունը։ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր Գլխավոր արխիվային վարչության թույլտվությամբ Աստրախանի մարզային օրգանները, Աստրախան քաղաքում տեղի հայ գաղթօջախի (հատկապես եկեղեցիների) գործունեության հետևանքով առաջացած արխիվները (XVIII—XIX դդ.)՝ մոտ 5000 միավոր, հանձնեցին Սովետական Հայաստանին։ Դրանք մեծ մասամբ ռուսերեն լեզվով գրված հաստափոր մատյաններ են, որոնցում բաղմակողմանիորեն լուսաբանված են Վոլգայի գետաբերանի շրջանում հաստատված հայերի կյանքի բոլոր ընագավառները։

Վրացական արխիվային հաստատությունները նույնպես Սովետական Հայաստանին հանձնեցին իրենց մոտ պահվող մի շարք ֆոնդեր, որոնք վերաբերում էին հայ ժողովրդի պատմությանը։ Ձեռք են բերվել նաև մի քանի տասնյակ հազար կադր միկրոֆիլմեր։ Լվովից, Քիշնևից ևս որոշ արխիվային նյութերի իսկականները հանձնվել են մեզ։ Փարիզի Նուբարյան գրադարանից Երևան փոխադրվեցին հայ ազգային պատվիրակության (Պողոս Նուբարի նախագահությամբ) գրագրությունների իսկականները և միկրոֆիլմերը։

Պետական կենտրոնական արխիվների հարստացման կարևոր աղբյուրներից մեկը հանդիսանում է մեր ժողովրդի անվանի զավակների, գիտության, արվեստի, ռազմական, հասարակական կյանքում խոր հետք թողած գործիչների անձնական արխիվների ձեռքբերումը։

Միայն Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվում վերջին տարիներս ընդունվել և մշակվել են մոտ 90 անձնական արխիվային ֆոնդեր։ Դրանց թվում՝ պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի, կոմպոզիտոր Կ. Հ. Զաքարյանի, գեներալներ Ա. Գ. Կարապետյանի, Ն. Գ. Սաֆարյանի, ծովակալ Ի. Ս. Իսակովի, պրոֆ. Խ. Ս. Սամվելյանի և ուրիշների։

Պատմության պետական կենտրոնական արխիվում ստեղծվել են մի շարք արժեքավոր անձնական ֆոնդեր, որոնց թվում՝ «Անդրանիկ Օզանյան», «Գյուտ Աղանյանց», «Շիրվանզադե», «Հ. Հովհաննիսյան», «Միք. Նալբանդյան», «Դեն. Նաղարբեկով», «Ծովակալ Լ. Մ. Սերբերյակով», «Ն. Ս. Լիսիցյան», սփյուռքահայ գործիչներ Ռ. Ճեպեճյանի, Է. Տ. Գրիգորյանի, Լ. Մարտիրոսյանի, Ս. Դ. Ավյանի և ուրիշների։

Սովետական Հայաստանն այժմ ունի ժամանակակից մակարդակին հասցված պետական կենտրոնական արխիվներ, որոնք մեր պետականության վերականգնման և ամրապնդման ցուցանիշներից մեկն են։

ՀՍՍՀ գիտ. վաստակավոր գործիչ
Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ